դունելով, Վեհափառը օրհնեց ժողովրդին, և ապա գնաց դէպի Սուխոյֆանտանի իջեւանը, ուր ճաշ էր պատրաստած։ Եւ ահա հեռուում՝ Երեւանի ու Նոր Բայազիդի սահմանի վրայ, որ Քեօթան դաղի վրայի Նոր շէն գիւղի վերեւն է, ուր բնակւում են հայ քուրդ և մալական, երեւացին ձիաւորներ և նշանագգեսաները փայլեցին։ Նոր Բայազիդի գաւառապետ Սիմեոնենկօն երեւաց բազմաթիւ հեծեալներով։ Վեհափառը հրամայեց կառքը կանգնեցնել. գաւառապետը, նորա օգնական Մէլիք Ղափլանովը և ուղեւորութեան տնօրէն (дистанціонный Начальникъ) ներկայացան և հարիւրաւոր կազակներ թնդացրին բարձրաձայն ուռայն։ Վեհափառի կառքը շարժուեցաւ և ճանապարհորդութիւնը շարունակուեցաւ։ 11½ ժամին Վեհափառը հասաւ Սուխոյֆանտանի իջեւանը, ուր մալականների տների կտուրները զարդարուած էին երփներանգ դրօշակներով։ Իջեւանի մուտքի մօտ կանգնած էին շրջակայ գիւղերի հայերն ու մալականները, որոնք իւրաքանչիւրն առանձին մատուցին Վեհափառին աղ ու հաց. իջեւանը զարդարուած էր ծաղիկներով և դրօշակներով, իսկ իջեւանի սենեակները ճոխ զարդարուած էին գորգերով։ Վեհափառը այդ տեղ իսկ ներկայացող հոգեւորականութեան պատրաստած ճաշը վայելելով՝ շարունակեց ճանապարհը դէպի հետեւեալ ներքին Ախտայի իջեւանը։ Ճանապարհին ժողովրդի բազմութիւնը հետզհետէ աւելանում էր. երեւեցան նաեւ տէգերով զինուորուած քուրդերը. ճանապարհին հանդիպած գիւղերի տների կտուրներին ծածանում էին յանպատրաստից ձեւացրած դրօշակներ։ Ահա երեւեցաւ ներքին Ախտայի կայարանը, ուր պատրաստուած էր մի փունջ՝ Վեհափառի նշանադրօշմով (вензель)։ երբ Վեհի կառքը կանգ առաւ, հնչեցին շրջակայ գիւղերի հայ բնակիչների ողջունի կեցցէները, և պահնորդ չափարների ուռանները։

Վեհափառը մօտեցաւ մալականների և հայերի կողմից աղ ու հաց կրող սեղաններին, օրհնեց բնակիչներին և ամբողջ գաւառը. ընդունեց քահանաներին, խօսեց ու խրատեց. և կառքը նստաւ որպէս զի Ելենովկա ժամանէ այն տեղ գիշերելու։ Քրդերը, որոնք Վեհափառի կառքի ետեւից արշաւում էին, առանձին եռանդով սկսեցին զանազան թռիչքներ և ձիախաղեր անել։ Ելե-